ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 45

«07 » նոյեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավարի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 101 որոշումը:

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ - ԿՈՂՄ
Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ
Ա.Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ
Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ – ԿՈՂՄ
Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
07 նոյեմբերի 2014 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 45 ՈՐՈՇՄԱՆ

(Կազմված է 2014թվականի նոյեմբերի 7-ին,
Բաղկացած է 3 թերթից)

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի
ԹԻՎ 45 ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ. Տ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ

2014 ԹՎԱԿԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գ
տարածքային բաժինը, աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է (այսուհետ՝ բաժին), որը <<Քաղաքացիական կացության ակտերի
Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործառույթներ:
2. Բաժինը ստեղծվում , վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով՝ համայնքի ավագանու ո
Բաժինը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին:
3. Բաժնի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով , Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանա
սույն կանոնադրությամբ:
4. Բաժինը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
5. Բաժինն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոց

II. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Բաժնի նպատակները և խնդիրներն են՝
ա) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների իրականացումը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
բ) տարածքային բաժնի արխիվի վարումը.
գ) կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության տրամադրումը.
դ) օրենքով նախատեսված այլ նպատակներ և խնդիրներ:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Բաժինն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացնում է
գործառույթները.

1) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի հետևյալ պետական գրանցումները՝
ա. ամուսնությունը.
բ. ամուսնալուծությունը.
գ. ծնունդը
դ. որդեգրումը.
ե. հայրություն որոշելը.
զ. անվան փոխումը.
է. մահը.
2) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ.
3) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնումը.
4) իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

IV. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Բաժնի գործունեությունը կազմակերպում է Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավարը:
9. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը:
10. Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և քաղաքացիական կացության ակտերի գրառումները կազմելու որակ պատասխանատու է բաժնի պետը և գրանցում կատարող աշխատողը:
11. Բաժնի պետը՝
ա) իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրեն քաղաքապետարանի աշխատակազմի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով.
բ) կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկու ժամանակին և պատշաճ կատարումը.
գ) կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված իրավական ակտերի կատարումը.
դ) կատարում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները.
ե) բաժնի աշխատողների միջև բաշխում է նրանց պարտականությունները.
զ) իր իրավասության սահմաններում համագործակցում է պաշտոնատար այլ անձանց հետ.
է) ուսումնասիրում է բաժնի աշխատողների գործունեության դեմ ուղղված բողոքները.
ը) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնելիս ստանում է օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված ան տեղեկություններ և այլ նյութեր.
թ) ուսումնասիրում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համար տրված դիմումները, կայացնում համապատասխան որ պարզաբանում դրանց բողոքարկման ժամկետները և կարգը.
ժ) իրականացնում է հսկողություն տարածքային բաժնի ծառայողների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման, պաշ պարտականությունների ժամանակին և օրենքի պահանջներին համապատասխան կատարման նկատմամբ.
ժա) վարում է համապատասխան տարածքային բաժնի արխիվը.
ժբ) օրենքով սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրում է տեղեկատվություն կատարված քաղաքացիական կացության գրանցումների վերաբերյալ.
ժգ) աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում բաժնի համայնքային ծառայողների նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժերի կիրառելու մասին առաջարկություններ.
ժդ) համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնում է հաշվետվություն բաժն կատարված աշխատանքների վերաբերյալ.
ժե) պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների լուծման համար.
ժզ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

12. Բաժնի աշխատողը՝
ա) բաժնի պետի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ, վկայականների, տեղեկանքների, ակտային պատճ այլ փաստաթղթերի տրամադրման գործավարություն.
բ) իր լիազորությունների շրջանակներում վարում է բաժնի արխիվը.
գ) կատարում է բաժնի պետի ցուցումները և հանձնարարականները.
դ) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությ եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.
ե) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին.
զ) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.
է) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի փաստաթղթային սպասարկումը, ապահովում է փաստաթղթաշրջանառության աշխատանքները.
ը) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
թ) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղե հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.
ժ) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված լիազորություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 46

«07 » նոյեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածների 1-ին մասերի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյանի հաղորդումը՝ համաձայն N 1, N 2, N 3 հավելվածների:

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ - ԿՈՂՄ

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ա.Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ – ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
07 նոյեմբերի 2014 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 46 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ

հազար դրամ

N	Անվանումը	Հաշվարկային /տարեկան/	Հաշվարկային /եռամսյակ/	փաստացի	%	Ստուգման ամսաթիվ, կատ. մարմին	Ծանոթություն
1	Հարկային եկամուտներ /տող 1.1+տող 1.2/	22404.6	20000.0	14797.4	74.0		
1.1	Հողի հարկ	9824.0	8500.0	7041.0	82.8		
1.2	Գույքահարկ	12580.6	11500.0	7756.4	67.4		
2	Տուրքեր /տող 2.1+տող 2.2/	5972.4	5104.3	4922.4	96.4		
2.1	Պետական տուրք	2500.0	2500.0	2118.9	84.8		
2.2	Տեղական տուրք	3472.4	2604.3	2803.5	107.6		
3	Ոչ հարկային եկամուտներ /տող 3.1+տող 3.2+ տող 3.3+տող 3.4 + տող 3.5/	12039.0	10439.4	8111.5	77.7		
3.1	Համայնքի սեփականություն համարվող պահուստային հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներ	1320.0	1020.0	755.1	74.0		
3.2	Վարչական իրավախախտումների համար կիրառված պատժամիջոցներից եկամուտներ	100.0	50.0	15.0	30.0		
3.3	ՏԻՄ-երի և ենթակա բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտներ	2899.0	2219.4	2317.6	104.4		
3.4	Տեղական վճարներ	200.0	150.0	155.0	103.3		
3.5	Այլ ոչ հարկային եկամուտներ	7520.0	7000.0	4868.8	69.6		
4	Կապիտալ գործառնություններից եկամուտների համայնքային սեփականության /ներառյալ հողերի/ օտարումից ստացվող միջոցներ /տող 4.1+ տող 4.2/						
4.1	Հողի օտարումից մուտքեր						
4.2	Հիմնական միջոցների օտարումից մուտքեր						
5	Ընդամենը սեփական եկամուտներ /տող 1+տող 2+տող 3+տող 4+տող 5/	40416.0	35543.7	27831.3	78.3		

6	Պաշտոնական տրանսֆերտների ձևով ստացվող եկամուտներ /տող 5.1+ տող 5.2+ տող 5.3/	93275.5	69766.9	69766.1	100.0		
6.1	Դոտացիա	72824.4	54618.3	54618.3	100.0		
6.2	Այլ դոտացիաներ	19692.1	14769.1	14768.3	100.0		
6.3	Սուբվենցիաներ	759.0	379.5	379.5	100.0		
7	Համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ	0.4	0.4	0.4	100.0		
8	ՏԻՄ-երին պատվիրված լիազորությունների իրականացման համար հատկացված միջոցներ	4358.6	2750.0	2750.0	100.0		
Ընդամենը եկամուտներ /տող 5+ տող 6+ տող 7+ տող 8/		138050.1	108060.6	100347.4	92.9		

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 46 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Անվանումը	2012թ. փաստացի	2013թ. փաստացի	2014թ. փաստացի	2013թ. 2012թ.նկատմամբ %	2014թ. 2013թ.նկատմամբ %
1	Հարկային եկամուտներ /տող 1.1+տող 1.2/	10758.4	12754.3	14797.4	118.6	
1.1	Հողի հարկ	6363.9	6911.9	7041.0	108.6	
1.2	Գույքահարկ	4394.5	5842.4	7756.4	132.9	
2	Տուրքեր /տող 2.1+տող 2.2/	3591.0	4938.6	4922.4	137.5	
2.1	Պետական տուրք	779.0	1520.1	2118.9	195.1	
2.2	Տեղական տուրք	2812.0	3418.5	2803.5	121.6	
3	Ոչ հարկային եկամուտներ /տող 3.1+տող 3.2+ տող 3.3+տող 3.4 + տող 3.5/	8438.6	8790.2	8111.5	104.2	
3.1	Համայնքի սեփականություն համարվող պահուստային հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներ	909.1	983.2	755.1	108.2	
3.2	Վարչական իրավախախտումների համար կիրառված պատժամիջոցներից եկամուտներ	64.4	30.0	15.0	46.6	
3.3	ՏԻՄ-երի և ենթակա բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտներ	2717.9	2725.1	2317.6	100.3	
3.4	Տեղական վճարներ	118.0	256.6	155.0	217.5	
3.5	Այլ ոչ հարկային եկամուտներ	4629.2	4795.3	4868.8	103.6	
4	Կապիտալ գործառնություններից եկամուտների համայնքային սեփականության /ներառյալ հողերի/ օտարումից ստացվող միջոցներ /տող 4.1+ տող 4.2/					
4.1	Հողի օտարումից մուտքեր					
4.2	Հիմնական միջոցների օտարումից մուտքեր					
5	Ընդամենը սեփական եկամուտներ /տող 1+տող 2+տող 3+տող 4+տող 5/	22788.0	26483.1	27831.3	116.2	

6	Պաշտոնական տրանսֆերտների ձևով ստացվող եկամուտներ /տող 5.1+ տող 5.2+ տող 5.3/	51578.7	63366.7	69766.1	122.8	100.1
6.1	Դոտացիա	51578.7	56570.1	54618.3	109.7	96.5
6.2	Այլ դոտացիաներ	-	-	14768.3	-	-
6.3	Սուբվենցիաներ	-	6796.6	379.5	-	-
7	Համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ	195.6	3370.0	0.4	1723.0	0.01
8	ՏԻՄ-երին պատվիրված լիազորությունների իրականացման համար հատկացված միջոցներ	1767.7	1858.1	2750.0	105.1	148.0
Ընդամենը եկամուտներ /տող 5+ տող 6+ տող 7+ տող 8/		76134.4	91707.9	100347.4	120.4	109.4

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 46 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԸՍՏ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

N	Անվանումը	Պլան	Փաստացի	%
1	Օրենսդիր և գործադիր մարմինների պետ. կառավարում	23885.9	22077.8	92.4
2	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	3429.2	2656.9	77.5
3	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	1594.0	1230.3	77.2
4	Տնտեսական հարաբերություններ	11893.0	13862.6	116.6
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	16366.0	15735.0	96.1
6	Բնակարանային շին.	7700.0	5454.0	70.8
7	Առողջապահություն	-	-	-
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	16054.3	13931.8	86.8
9	Կրթություն	24402.9	21851.1	89.5
10	Սոցիալական պաշտպանություն	1046.3	1046.0	100.0
11	Պահուստային ֆոնդ	1689.4	-14670.0	868.4
ԸՆԴԱՄԵՆԸ		108061.0	83175.5	77.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 47-Ն

«07 » նոյեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 56 հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով, 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքի բնակելի կառուցապատման գոտում Ձերժինսկի փողոցի N 10/4 հասցեում գտնվող հողատարածքում ավտոտնակ կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 008-003-0042-0023) 31.5 քառակուսի մետր հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:
2. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 16632 (տասնվեց հազար վեց հարյուր երեսուներկու) դրամ:

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ - ԿՈՂՄ

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ա.Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ – ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
07 նոյեմբերի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 48-Ն

«07 » նոյեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 56 հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով, 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքի բնակելի կառուցապատման գոտում Ձերժինսկի փողոցի N 10/3 հասցեում գտնվող հողատարածքում ավտոտնակ կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 008-003-0042-0024) 31.5 քառակուսի մետր հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:
2. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 16632 (տասնվեց հազար վեց հարյուր երեսուներկու) դրամ:

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ - ԿՈՂՄ

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ա.Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ – ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
07 նոյեմբերի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 49

«07 » նոյեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ԹԻՎ 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, 46-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, 3-րդ մասի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 11-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքային համայնքի սեփականության 2013 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին>> թիվ 25-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

Որոշման հավելվածում ավելացնել նոր՝ 128-ից 133 տողերը հետևյալ խմբագրությամբ՝

N	Գույքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի հաշվե-կշռային արժեքը (հազար դրամ)	Հաշվե-կշռային ընդհանուր արժեքը (հազար դրամ)
128	Մարալիկ համայնքի էլեկտրալուսավորության ցանց	Գծ.մ/կետ	1000/2	497.0	994.0
129	Աղբամաններ	հատ	10	24.0	240.0
130	Նստարաններ	հատ	3	86.4	259.2
131	Խոտհնձիչ	հատ	1	130.0	130.0
132	Մոնիտոր PHILIPS.223v5LSB	հատ	1	80.0	80.0
133	Կոշտ սկավառակ, HITACHI, 500GB	հատ	1	32.0	32.0

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
07 նոյեմբերի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 50-Ն

«07 » նոյեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 66-րդ հոդվածի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքի բնակիչ Մկրտիչ Մելոյանին պատկանող Նոր թաղամաս N 5-րդ փողոցի հարևանությամբ գտնվող բնակելի առանձնատը կից համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքից, որպես բնակարանային պայմանների բարելավում, ուղղակի վաճառքով թույլատրել հատկացնել 0.02669 հա հողամաս (ծածկագիր 008-0003-0022):

2. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 140924 (մեկ հարյուր քառասուն հազար ինը հարյուր քսանչորս) դրամ:

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ - ԿՈՂՄ

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ա.Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ – ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
07 □□□□□□□□□□ 2014 □□□□□□

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 50-Ա

«7 » նոյեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով այն, որ Մարալիկ քաղաքի Նոր թաղամասի 5-րդ փողոցի թիվ 45 հասցեում գտնվող Մկրտիչ Մելոյանին սեփականության իրավունքով պատկանող 0.11105 հեկտար մակերեսով կառուցապատված հողամասին (կադաստրային ծածկագիր 008-0003-0022) կից՝ 0.02669 հեկտար հողամասը (կադաստրային ծածկագիր 008-0003-0022), որի չափը չի գերազանցում քաղաքացու սեփականությունը հանդիսացող հողամասի չափից, որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին

որոշում է

2.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Մարալիկ քաղաքի Նոր թաղամասի 5-րդ փողոցի թիվ 45 հասցեում գտնվող Մկրտիչ Մելոյանին սեփականության իրավունքով պատկանող 0.11105 հեկտար մակերեսով կառուցապատված հողամասի ընդլայնման համար, դրան կից՝ Մարալիկի համայնքի սեփականությունը հանդիսացող 008-0003-0022 կադաստրայի ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0.02669 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական դասակարգման հողամասը ուղղակի վաճառքով օտարել Մարալիկ քաղաքի բնակիչ Մկրտիչ Մելոյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 /մեկ/ հեկտարը՝ 5280030 դրամ, 0.02669 հեկտար մակերեսով հողամասի համար՝ 140924 (մեկ հարյուր քառասուն հազար ինը հարյուր քսանչորս) դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 51-Ն

« 07 » նոյեմբերի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 1, դաս 1 (ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի 23090.9 թիվը փոխարինել 21590.9 թվով, 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի 1400.0 թիվը փոխարինել 1600.0 թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 1, դաս 1 (աղբահանում) և տնտեսագիտական դասակարգման 4264 (տրանսպորտային նյութեր) հոդվածի 4247.7 թիվը փոխարինել 4922.7 թվով, 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածի 860.0 թիվը փոխարինել 935.0 թվով:
3. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 1, դաս 1 (նախադպրոցական հիմնարկի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի 11102.8 թիվը փոխարինել 11502.8 թվով, 4267 (կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածի 2700.0 թիվը փոխարինել 2300.0 թվով, 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի 300.0 թիվը փոխարինել 600.0 թվով:
4. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 5, դաս 1 (երաժշտական դպրոցի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի 9199.9 թիվը փոխարինել 8999.9 թվով, 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի 300.0 թիվը փոխարինել 650.0 թվով:
5. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 2, դաս 1 (գրադարանի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի 6707.7 թիվը փոխարինել 6807.7:
6. Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի 509.4 թիվը փոխարինել 209.4 թվով:
7. Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 4, դաս 1 (փողոցների լուսավորում) և տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի 1070.8 թիվը փոխարինել 1370.8 թվով:

Բ. ՄԱԿԱՐՅԱՆ - ԿՈՂՄ

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ա.Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ – ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ
07 նոյեմբերի 2014 թվական